ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն 1

ք. Գյումրի «30» «հոկտեմբեր» 2020 թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետ Տ. Պետրոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), ով գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ս. Հարությունյանի, (այսուհետ՝ Կատարող), ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան

1. Պայմանագրով սահմանվում է «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08բաժնի 02խմբի 02դասի 1075ծրագրով պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ընթացիկ դրամաշնորհների տրամադրման կարգը, որի շրջանակներում Կատարողը ստանձնում է իրականացնել՝ «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» 11004 միջոցառումը՝ Պայմանագրով սահմանված կարգով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է բյուջեից հատկացված գումարի շրջանակներում Կատարողին տրամադրել 47 686 200 (քառասունյոթ միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

2. Ծառայության ընդհանուր նկարագրությունը ներկայացված է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Հավելված 1»-ում:

Կողմերի իրավունքները և պարտականությունները

3. Պատվիրատուն իրավունք ունի.

1) Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2) Պահանջել Կատարողից Պայմանագրով սահմանված ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

4. Պատվիրատուն պարտավոր է.

1) Պայմանագրի շրջանակներում աջակցել Կատարողին.

5. Կատարողն իրավունք ունի.

1) Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը:

6. Կատարողը պարտավոր է.

1) Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2) Ծառայությունը մատուցել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3) Կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

4) Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծառայության իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման կարգը և ժամկետները

7. 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության չափը կազմում է 47 686 200 (քառասունյոթ միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

8. Կատարողը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը Պատվիրատուին է ներկայացնում տվյալ եռամսյակում մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտը (երկու օրինակից), իսկ 4-րդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 4-ը:

9. Պատվիրատուն հանձնման–ընդունման ակտը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը: Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

10. Պատվիրատուն վճարումներն իրականացնում է համամասնորեն՝ ամսական կտրվածքով, անկանխիկ՝ դրամական միջոցները մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Հավելված 3»-ում սահմանված վճարման ժամանակացույցի:

11. «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հիմքով, բյուջեից տրամադրվող դրամաշնորհների և սուբսիդիաների նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի

գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների: Եթե սույն կետում նշված հոդվածներով նախատեսված ծրագրերը և միջոցառումները ենթական չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2020 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Կողմերի պատասխանատվությունը

12. Պայմանագրով հատկացված գումարի շրջանակներում Կատարողի կողմից աշխատանքների և ծառայությունների գնումները պետք է իրականացվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

13. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կարարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կատարողին վճարվելիք գումարներից:

14. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պայմանագրի գործողության ժամկետը

15. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

16. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

Եզրափակիչ դրույթներ

17. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

18. Պայմանագիրը և հավելվածները կնքված են հայերեն լեզվով, Պայմանագիրը կազմված է 2 էջից և 3 հավելվածից՝ «Հավելված 1» 1 էջ, «Հավելված 2» 1 էջ, «Հավելված 3» 1 էջ, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հաղթանակի 47
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900218255022	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900218000363
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 05519736
ՀՀ Շիրակի մարզպետ	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝
Տ.Պետրոսյան	Ս. Հարությունյան
Կ.Տ.	Կ.Տ.

«Հավելված 1
2020 թ. « հունվար » « 30 » կնքված
Թիվ 1 պայմանագրի»

2020 թվականին մատուցվող ծառայությունների ընդհանուր նկարագրությունը

«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ

Թանգարանի գործունեության հիմնական նպատակը և առարկան մշակութային գործունեության իրականացումն է: Մշակութային արժեքների և առարկաների /օբյեկտների/ պահպանումը, ստեղծումը, մեկնաբանումը, մշակութային բարիքների ծառայությունների և արտադրանքի /ապրանքների/ մատուցումը ի իրացումը:

Թանգարանը օրենքին կամ հիմնադրի որոշմանը համապատասխան սահմանված կարգով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներ՝ հրատարակչական գործունեության իրականացում, հուշանվերների արտադրություն և իրացում: Թանգարանի մշակութային գործունեությունը ֆինանսավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բնակչության վճարովի ծառայությունները կատարվում են գնացուցակներով նախատեսված գներով և տարիֆներով:

Գիտահետազոտական աշխատանքների բնագավառում թանգարանը

ա/ ուսումնասիրում է և գիտական մշակման ենթարկում գիտական, գեղարվեստական ստեղծագործությունները և նրա հետ կապված նյութերը

բ/կատարում է գիտահավաքչական, գիտաֆոնդային, գիտացուցադրական, գիտալուսավորչական աշխատանքներ ն թանգարանագիտական մշակումներ

գ/ մշակում գիտացուցադրական ծրագրեր

դ/ հրավիրում գիտական նստաշրջաններ, գործարար և գիտական կապեր հաստատում հանրապետության և այլ երկրների թանգարանների, մշակութային հիմնարկների և գործիչների հետ:

Գիտահավաքչական աշխատանքների բնագավառում թանգարանը

ա/ մշակված ծրագրերի իրականացման կարգով հավաքում և ձեռք է բերում անհատներից և կազմակերպություններից թանգարանի գործունեության հետ կապված տարբեր բնույթի նյութեր

բ/ համալրում է թանգարանային ֆոնդը գնման և նվիրատվությունների շնորհիվ:

Թանգարանային ֆոնդերի հաշվառման և պահպանման աշխատանքների բնագավառում թանգարանը

ա/ իրականացնում է հիմնական և գիտաօժանդակ ֆոնդերը կազմող արժեքների հաշվառումը և նախնական գիտական մշակումը, թանգարանային առարկայի ակտավորումը, գրանցումը, ծածկագրումը և գիտական գույքագրումը

բ/ սահմանված կարգով վարում է թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված արժեքների ինչպես նաև դրոշմանիշերի, մեդալների, շքանշանների հատուկ հաշվառում

գ/ ապահովում է թանգարանային արժեքների տեղադրումը հատուկ սարքավորված տարածքում, միջոցներ է ձեռնարկում պահպանման ռեժիմի իրականացման ուղղությամբ

դ/ պրոֆիլակտիկ միջոցներ է ձեռնարկում թանգարանային արժեքների պահպանման համար

ե/ կազմում է գիտական տեղեկատու, քարտարաններ, կատալոգներ, ուղեցույցներ

զ/ հավաքում է թանգարանի գործունեության հետ կապված տարբեր բնույթի գրականություն, տպագիր նյութեր և փաստաթղթեր

Թանգարանի գործունեությունը նպատակաուղղվում է անհատի բազմակողմանի զարգացմանը, ազգային մշակույթի պահպանմանը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հաղթանակի 47
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211255022	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900218000363
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 05519736
ՀՀ Շիրակի մարզպետ՝	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝
Տ.Պետրոսյան Կ.Տ.	Ս. Հարությունյան Կ.Տ.

«Հավելված 2
2020 թ. « հունվարի » « 30 » կնքված
Թիվ 1 պայմանագրի»

2020 թվականի համար սահմանված ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ

1. Ոչ ֆինանսական ցուցանիշներ

		Քանակը	*Գումարը հազ.դրամ*
Քանակական	Թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում/թանգարանային առարկա/	**5270**	
	Թանգարանային առարկաների կոնսերվացում /թանգարանային առարկա/	**2502**	
	Թանգարանային առարկաների վերականգնում /թանգարանային առարկա/	**0**	
	Թանգարանային առարկաների պետական հաշվառում /գիտական գույքագրում անցած թանգարանային առարկաների թիվը/	**5270**	
	Թանգարանային հավաքածուների սպասարկում	**201**	
	Թանգարանային այցելուների սպասարկում /մարդ/	**20000**	
	Մշտական և ժամանակավոր ցուցադրություններում ցուցադրված թանգարանային առարկաների թիվը	**2768**	
	ցուցադրությունների և թանգարանային միջոցառումների կազմակերպում /ցուցահանդես/	**5**	
Մատուցվող ծառայության վրա կատարված ծախսը			**47686,2**

1. Ֆինանսական ցուցանիշները

1. Սպասարկվող թանգարանային առարկաների տարեկան քանակը **5270 /միավոր/**

2.Մեկ միավոր առարկայի սպասարկման նվազագույն գինը շահավետ **9048,6 /հազ.դրամ/**

3.Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը **47686,2 /հազ.դրամ/**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հաղթանակի 47
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211255022	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900218000363
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 05519736
ՀՀ Շիրակի մարզպետ՝	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝
Տ.Պետրոսյան	Ս. Հարությունյան

Կ.Տ.

«Հավելված 3
2020 թ. « հունվարի » « 30 » կնքված
թիվ 1 պայմանագրի»

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ
2020 թ. գումարների վճարման ժամանակացույցն ըստ ամսական բացվածքի՝

N	Ամիսը	Գումարը (դրամ)
1.	Հունվար	0
2.	Փետրվար	4 769 200
3.	Մարտ	4 769 100
4.	Ապրիլ	3 757 700
5.	Մայիս	3 757 700
6.	Հունիս	3 757 800
7.	Հուլիս	3 757 700
8.	Օգոստոս	3 757 700
9.	Սեպտեմբեր	3 757 800
10.	Հոկտեմբեր	5 200 500
11.	Նոյեմբեր	5 200 500
12.	Դեկտեմբեր	5 200 500

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հաղթանակի 47
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211255022	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900218000363
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 05519736
ՀՀ Շիրակի մարզպետ	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/ա՝
Տ.Պետրոսյան	Ս. Հարությունյան
Կ.Տ.	Կ.Տ.